ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «19» մարտի 2024 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 64-Լ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ ԿԱՐԳԱԲԵՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 28-Լ հրամանով հաստատված հավելվածի 18-րդ կետի 7-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել.

1) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) սոցիալական ցանցերի էջերի, դրանց գրանցման և շահագործման նպատակով օգտագործվող էլեկտրոնային փոստերի, հեռախոսահամարների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի մուտքանունների և գաղտնաբառերի գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանել, որ.

1) սույն հրամանի 1-ին կետով հաստատված ցանկում ներառված սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը Կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնի պետի կողմից թարմացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ.

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը, ինչպես նաև դրանց փոփոխությունները հաշվառվում և պահպանվում են Կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնում.

3) ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը ենթակա են պարտադիր փոփոխության մինչև սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց փոփոխությունը կամ պաշտոնավարման դադարեցումը.

4) նշված տեղեկատվությունը հանդիսանում է ծառայողական գաղտնիք:

3. Սույն հրամանի կատարումը վերապահել Կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնի պետին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ